

առեւտրական ծրագիրներ, այլ խօսքով՝ դիմումնագիր ներկայացնեն, եւ մենք անոնց մէջէն կ'ընտրենք այն ծրագիրները, որոնք իրականանալու կարելիութիւնը ունին, եւ այդ ծրագիրներու հիման վրայ մենք կ'ընտրենք լսարան մը, եւ այն գիւղացիները, որոնք 40-50 տարեկան են, 3-4 շաբթուան ընթացքին իրենց ներկայացուցած գաղափարը կը վերածեն առեւտրական ծրագրի, որ կը ներկայացուի դատական կազմի մը, որ իր կարգին բաղկացած է տեղական՝ դրամատան ներկայացուցիչ, զարգացման մարզի եւ այլ ներկայացուցիչներէ: Այդ ծրագիրներուն մէջէն կ'ընտրուին գանազան ծրագիրներ, որոնք մեր անմիջական եւ մասնագիտական օժանդակութեան, ինչպէս նաեւ վարկային դիւրութիւններու ստեղծման տակ կը սկսին գործունէութեան: Մինչեւ տարեվերջ կը յուսանք մօտ 150 ձեռնարկ յաջողցնել այս երեք շրջաններուն մէջ: Այս գործին մէջ մենք պիտի ներգրուենք մեր համալսարանի ուսանողները, մեր շրջանաւարտները, որոնք հետաքրքրուած են եւ կ'ուզեն քաջալերել այդ շրջաններու ծրագիրները: Այս մօտեցումը տարբեր է, քան ինչ որ կ'ըլլայ կառավարութեան կամ արտաքին գործոց նախարարութեան կողմէ, որովհետեւ հիմնուած է անհատի վրայ եւ ոչ թէ համայնքի զարգացման վրայ: Ես կը հաւատամ, որ Հայաստան չի կրնար զարգանալ, եթէ այդ անհատ ձեռնարկատէրերը գիւղերուն մէջ գոյութիւն չունենան: 15-20 տարիներէ ի վեր արտաքին օժանդակութիւններ կ'ըլլան գիւղերու զարգացման համար, բայց տնտեսութիւնը տեղէն չի շարժիր:

«Ա.»- Կրնա՞նք յայտելալ տեղեկութիւններ ունենալ համալսարանի նոր շէնքին վերաբերեալ:
Յ. Ա.- Յաջորդ քանի մը ամիսներու ընթացքին իր աւարտին կը հասնի նոր՝ «Աւետիսեան» շէնքը, որ մօտաւորապէս 10 հազար քառակուսի մետր տարածութեան վրայ կը գտնուի եւ հաւանաբար լաւագոյն համալսարանական կառոյցը պիտի ըլլայ ամբողջ շրջանին մէջ: Այդ ձեւով նաեւ կրնանք կրկնապատկել մեր ուսանողութեան թիւը եւ ուրիշներ ներգրաւել գանազան երկիրներէ: «Աւետիսեան» շէնքի այս կառոյցը համալսարանը կը դնէ նոր որակի եւ տեսակի մէջ, եւ նոյնիսկ ուսանողներուն մօտեցումը կը փոխուի:

«Ա.»- Ապագայ հեռանկարով, ի՞նչ ծրագիրներ կը փորձէ իրագործել համալսարանը:
Յ. Ա.- Ինծի համար, որպէս լիբանանահայու, որպէս սփիւռքահայու, շատ կարեւոր տեղ կը գրուէ արեւմտահայ գրականութեան թուայնացման ծրագիրը: Մենք մինչեւ օրս ունինք դասական գրականութեան թուայնացումը, որ կը ներառէ 4-16րդ դարու հեղինակները: Իմ մտահոգութիւններէս մէկը այն է, որ մենք ունինք հսկայ արեւմտահայ գրականութիւն, սակայն անկէ օգտուողներուն թիւը հետզհետէ կը նուազի, եւ կորուստի վտանգի դիմաց գտնուող մեր արեւմտահայ գրականութիւնն է եւ ոչ թէ արեւելահայը: Այս պատճառով մենք մէկ ու կէս տարի ամառ ձեռնարկեցինք այս աշխատանքին եւ այսօր մօտաւորապէս 100 հազար էջ՝ 1850-2000 թուականը, արդէն իսկ թուայնացուած է եւ մինչեւ 2008-ի հոկտեմբերը կը յուսանք այս աշխատանքը որոշ չափով իր աւարտին հասցնել: Մենք ձեռնարկեցինք եւ կը յուսանք, որ Սփիւռքը կը շարունակէ օժանդակել այս գործին: Այդ թուայնացմամբ նաեւ մենք հսկայական կարելիութիւններ ունինք՝ օտար լեզուներու թարգմանուելու, հետազօտական աշխատանքներ տանելու եւ, անշուշտ, շատ աւելի դիւրին եւ հեշտ ձեւով: Հետեւաբար մեր համալսարանի մտահոգութիւններէն մէկն է մեր մշակոյթի ապագան: Իբրեւ ապագայ ծրագիր համալսարանը նաեւ իր գործունէութիւններուն մէջ պիտի ներառէ Հայաստանի շրջաններուն մէջ հեռակայ ուսուցման ծրագիր, նաեւ՝ կարճ դասընթացներու ծրագիր, որուն արդէն իսկ ձեռնարկած են մեր գիւղական զարգացման կեդրոնները: Հայաստանի կրթութեան մէջ մեծագոյն մարտահրաւերներէն մէկը, որ մեր գիւղական զարգացման ծրագրի հիմքերէն մէկը կը կազմէ, այսօր ապագայ սերունդի զարգացման մասին մտածելն է, բայց ունինք սերունդ մը 35-70 տարեկան, որ յառաջիկայ 30-40 տարիներու ընթացքին տնտեսութեան մաս պիտի կազմէ: Այդ մարդիկը անցած են խորհրդային դպրոցէն եւ պատրաստ չեն այսօր տնտեսութեան արդար դերակատարները ըլլալու: Հետեւաբար մեծագոյն կրթական հարցը ներկայիս Հայաստանի մէջ վերադաստիարակման հարցն է եւ այս մասին մտածող չկայ:

«Ա.»- ԼՕԽ-ի «Արաքսի Պուլլորճեան» ընկերաբժշկական կեդրոնի Կալա-ձեռնարկին դուք հիւր-բանախօսն էիք: Ի՞նչ ունիք ըսելիք ԼՕԽ-ի գործունէութեան մասին՝ թե՛ արժեւորման եւ թե՛ ապագայի հեռանկարով:

Յ. Ա.- ԼՕԽ-ի «Արաքսի Պուլլորճեան» կեդրոնը մեծ կարելիութիւններով մեծ զարգացում ստացաւ, ամբողջական ամողջապահական կեդրոն մը ըլլալու մտայղացքը իրականացուց եւ ոչ միայն դարմանումի եւ բժշկութեան, այլեւ կանխարգիլման ուղղութեամբ համայնքի մէջ աշխատանք

տանելով:

Ես կ'ուզեմ ըսել, որ ապագայի հեռանկարով պետք է աշխատանք տարուի ամողջութիւն կերտելու մէջ: Այս մէկը բոլորովին տարբեր հասկացողութիւն է: Չենք կրնար միայն կանխարգիլումով բուժել, այլ նաեւ պետք է ներկայ հիւանդութիւններուն մէջ ամողջութիւն կերտել: Կը յուսամ, որ այս կեդրոնը յառաջիկայ տասնամեակին ըլլայ ոչ միայն ամէնօրեայ հիւանդներ դարմանող, բուժող եւ կանխարգիլող, այլեւ ծրագրային նոր աշխատանքներու ծիրին մէջ փորձէ կերտել ժողովուրդին ամողջութիւնը: Այս մէկը շատ անելի հետաքրքրական նորութիւն մըն է ապագայի հեռանկարով:

Հարցազրոյցը վարեց՝
ՄԱՐԱԼ ՄԻՍԵԱՆ

Վաստակաշատ դուկտոր Յարութիւն Արմէնեանի հրաժարականը

(Շարունակուած էջ 6-էն)

հիմնադիր և պատվավոր նախագահի դերը կրթօջախի ստեղծման և կայացման գործում: Չնայած առկա դժվարություններին, նա իրականության վերածննդի համալսարանի հիմնադրման գաղափարը, դարձավ կրթական այս մեծ հաստատության ձեռնարկի նախաձեռնողը: Հենց ձեռնարկի նախաձեռնողի գործն է՝ վերցնել գաղափարն ու իրագործել, այն գետնից հիշտ տեղում, հիշտ ժամանակին:

Դր. Աղբաբյանի համախոհ-գործակիցներն էին դր. Արմեն Տեր-Վարդանյանը՝ Կալիֆորնիայի Բերկլի համալսարանից և դր. Ստեփան Կարամարդյանը՝ Կալիֆորնիայի Իրվայն համալսարանից: Անշուշտ, ծրագիրը կմնար թղթի վրա, եթե չլիներ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության և անձամբ Լուիզ Սիմոն-Մանուկյանի աջակցությունը այս գաղափարին: Հենց սկզբից նա ամեն տարի 1 մլն դոլար էր ներդնում, և դա այն հսկայական ներդրումն էր, առանց որի անհնար կլիներ ունենալ այսպիսի համալսարան:

Ինչպես հայտնի է, որևէ հաստատության շենքեր միայն կառույց չէ և պետք է ֆունկցիոնալ ունենա, պետք է աշխատի ու գործի, պետք է ունենա իր ներքին հասկացողությունները և պետք է ստեղծի մարդկային ներքին հարաբերություններ: Այդ ամենը հետո է գալիս, իսկ Աղբաբյանն այն առավելությունն ուներ, որ կարողանում էր ճանաչել մարդկանց: Նա ի մի բերեց նվիրյալ մարդկանց մի խումբ, ավելի հիշտ՝ թիմ: Հետո ստեղծվեց հոգաբարձություն, որը կառավարության հետ հաստատեց բալանսները լավ հարաբերություններ, և այդ թվում, վարչապետի, ինչպես նաև նախագահի հետ: Նա նույնպիսի լավ հարաբերություններ էր հաստատել հայրենի գիտաշխարհի ներկայացուցիչների հետ, քանի որ հանդիսանում էր Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի արտասահմանյան անդամ:

Վերջում անդրադարձանք նախագահի հրաժարականին:

- *Ինչո՞ւ: Արդյո՞ք դա անհրաժեշտ կամ պարտադիր էր:*

- Ո՛չ, դա իմ կամքն էր, - ասաց: Տասներեք տարիներից ի վեր արդեն ժամանակն է, որ համալսարանը նոր շունչ առնի: Դա անհրաժեշտ է, մասնավոր, եթե հարմար մարդ գտնվի: Այդ գաղափարին եմ եկել Ջոնս Հոփկինս համալսարանի իմ գործակցից, որն իմ դեկանն էր: Նա տաղանդավոր ու փորձառու անձնավորություն էր, ավելի հիշտ՝ հասարակական առողջապահության ամենանշանավոր մասնագետներից մեկն աշխարհում: Ըստ նրա, ամեն մարդ յուրաքանչյուր 5-10 տարին մեկ պետք է նոր իրագործումների դաշտ որոնի և երբ որոշակի տեղ հասնի, պետք է հրաժարվի նախկինից: Բացի այդ, տարիքի հարց էլ կա: Այս տարիքիս կուզեմ հատկապես զբաղվել այնպիսի բաներով, որոնք գտնվում են անձնական նախադրություններիս ոլորտում: Կուզեմ շարունակել իմ մասնագիտության և ընդհանրապես զբաղվելով, արվեստի և այլ ուղիներով:

- *Իսկ փոխարինող պատրաստե՞լ եք: Որևէ մասնագետի, կադրի, հասցրե՞լ եք այդ մակարդակին:*

- Երևանի առումով հանգիստ եմ, քանի որ այստեղ կան հրաշալի անձինք, որոնք լավ վարչական աշխատողներ են, հասել են անգամ դեկանների մակարդակի և, միևնույն ժամանակ, ազնիվ ու շիտակ մարդիկ են: Դա ինձ մեծ գոհունակություն է պատճառում: Իսկ ինչ վերաբերում է առաջնորդին, դա կորոշվի հոգաբարձության կողմից: Սովորաբար լինում են բազմաթիվ հայտարարություններ և որոնումներ: Սա մասնագիտություն է և հատուկ պրոֆեսիոնալներ են վարձվում, որոնք ուսումնասիրություններ են կատարում տարբեր համալսարանների մեջ՝ համապատասխան անձը գտնելու նպատակով: Սովորաբար տվյալ պաշտոնի համար ամենահարմար մարդիկ ընտրվում են ղիմում: Չղիմողներին, որոնց մեջ արժանավորների ավելի մեծ հավակնություն կա, հարկ է՝ գտնել, համոզել, ցանկի մեջ դնել և նոր այդ ցանկը բնակարկել: